

մեանց վրայ «լուծիք» անում, այսինքն շուրջ սրտկում և ուրախանում:

Հոյն օրը նշանածները փայ են տանում իրենց նշանածներին:

Վերափոխումն Ախտաժամնի. — Այդ օրը եկեղեցում խաղող են օրհնում և շատերն էլ մաւ տալ անում: Մատաղատէրը Շաքաթ երեկոյան մի ոչխար է տանում. եկեղեցու բակում մորթում են ոչխարը, որի ծոռները (աջ ոտը կոչում է «էրի»), կաշին և զլուխն ուղարկում են քահաւային ասելով.

Էրին, էրին

Տուր տէրտէրին:

Իսկ ծնացեալ մասը տուն բերելով եփում, մաս մաս անում, ապա «շամբը» լցնելով՝ դրնում «մաշիմի» մէջ և բաժանում զբացիներին, որոնք մատաղն ստանալով ասում են. «Ղաքուլ ընի, Աստած ձեք սրտի խորուրթը տայ»:

Սուրբ խալ. — Կիրակի օրը մատաղ են աւնում և բաժանում ժողովրդին, իսկ Երկուշաբթի առաւօտեան գիւղի բոլոր կանայք գնում են գերեզմանատուն և օրհնել են տալիս իրենց հին և նոր նշնեցեալների գերեզմանները. քահանային աջամբոյր են տալիս մեղր, խաղող և այլն:

Այս օրանք են Սպանիի Զահարմահալ գաւառի հայ գիւղացիութեան նշանաւոր տօները, որոնք օրըստօրէ, կենքի պայմանների և շրջապատի ժողովուրդների անխուսափելի ազդեցութեան ներքոյ, պակասում են, մաշում, կերպարանափոխում և զոհ գնում ժամանակի կանոնող ժանիքներին:

Վիլննա

ԱՐԱՐ ԵՐԵՄԵԱՆ

22 Ապրիլ 1928

Վ Ե Ր Ջ

ԱՇԽԱՐՀԻՍ ԱՄԵՆԱՄԵՍ ՊԱՆԴՈՎՈՐ

Նիւ Երբբի «Քենսիտանիա ֆայաս»ն է, որ միաժամանակ տեղ կրնայ տալ 10,000 հոգւոյ: Ունի 12 վերելակ մարդու և 18 հատ ալ՝ բեռներու փոխադրութեանց համար, ինչպէս նաև 3340 հետախօս զործի. լուսաւորութեան համար ալ՝ 18,000 էլեկտրական կանթիլներ: Մէջը կան նաև լորձական երկու խոշոր բաղնիքներ՝ լողալու առանձին աւազաններով: Պանդոկին մէջ կը հրատարակուի օրաթերթ մ'ալ, որ առտուններ ձրի կը բաշխուի սենեակները:

ՀԱՅ ԲԺՇԿԱԿԱՆ ԶԵՌԱԳԻՐԲ

Ս. ՂԱԶԱՐՈՒ

(Շար. տես Բազմավէպ, 1926 էջ 88)

ԼԵ.

ԲԺՇԿԱՐԱՆ ԱՆՆԱՅ ԴԱՅԵԱԿ

Զեռագիրս թէնւ պարզ ժողովածու մ'է այլեւայլ բժշկարաններէ, բայց արժանի կը համարիմ մասնաւոր ուշադրութեան, այն պատճառաւ՝ որ անոր շնորհիւ Հայունի մը բժշկութիւն ըրած է նախանցեալ դարու սկիզբները: Այդ Հայ բժշկունհին է՝ ԱՆՆԱՅ ԴԱՅԵԱԿ՝ Ի ԲԻՎԷՄԷԹ ԳԻՒՂԷ, մականուանեալ ԶԵՑՏԷՄԵԱՆ:

Ս. Ղազարու այս ձեռագիրը սակայն բուն Աննայի սեպհականը չէ, այլ ընդօրինակութիւն մը, զոր 1885ին կատարած է Բերանի մէջ Աւետիս Ղազարեան:

24 հարիւրորդամեղը մեծութիւն ունի այն, 17 հարիւրորդամեղը լայնութիւն և 1,5 հարիւրորդամեղը թանձրութիւն, և կը կրէ 1931 թուահամարը:

Լաւ կազմուած հատոր մ'է. կը բաղկանայ 204 էջէ, և 102 թերթէ. թուղթը արդի սովորական թուղթերէն է. գիրը շեղագիր և անվարժ:

✱

Իրբեւ բժշկարան մեծ արժէք մը չի ներկայացներ. և ինչպէս արդէն ըսի, կատարեալ ցաղումով մ'է այլեւայլ ծանօթ բժշկարաններէ:

Սկիզբի 12 էջերը ճալինոսէ (Գաղիանոս) առած բժշկա-առողջապահական խրատներ են, իսկ ծնացածները բոլորն ալ Ամիրոտովաթէ կամ Ասարէ հաւաքուած դեղերու ամփոփում մը, որու շնորհիւ Աննայ դայեակ իւր բժշկութիւնը կ'ընէ եղեր Գիրմէթ գեղի մէջ (Պանտրամ):

Աւելորդ կը համարիմ մանրամասն իւզսիլ այս դեղերուն վրայ, որոնք կը վխտան մեր բոլոր Հին բժշկարաններուն մէջ. ինձ համար հետաքրքրականը բժշկարանին Յի-

շատակարանն է՝ զոր կ'արժանագրէ Բա-
հանայ մը առանց իւր անունը տալու:

1750ը էջին վրայ է այն, « վասն կա-
պածի » վերնագիրը կրող դեղատոմսին
անմիջապէս վերջը, ուր կ'ըսէ:

« Քանզի բազում և յոյժ հայտ և հոտմի
« և բորբի փորձեալ է, ի թրիմէք գիւղ կայ,
« Աննայ դայեակն և առեցեալ բազում խըն-
« դարեօք, որ ասեին իոյ Սիյոնմի կին. ի
« բոսին Հայոց ՌճՂՖ Դեկտեմբերի ԺԳ,
« օրն կիրակի. և իոյ բժշկութեան արունստն
« էր՝ օգտակարութեամբ Աստուծով: Եւ
« զայս ընդ բժշկութեանն ներակցեալ, որ
« յայսմ գործս ռմա ուտուցեալ, վարդա-
« պետի ի տեսնելէ էր առեցեալ, որպէս ի
« վերոյ գրեցաք. և ես բազմամեղ ծառայս
« Աստուծոյ, և անպիտան հետեօջ բժշկու-
« բեան արունստի ի նոյն գիւղ քահանայա-
« գործութիւն տեսնելով, բազում աղերսիս
« օրինակն ինքն առաց, դայեակ Աննայն
« աղախին Քրիստոսի, հաւգոյցեալն ի Տէր
« և ես գրեցի տնայրժան ծառայս՝ անուամբ
« իմ քահանայս. և հաւգոյցեալ իրիցունիս
« իմ քաղաւմ՝ միլեոդոնաց աղայելով ի
« նմանէ, որ կոչի Բամպուտս աղախին Քրիս-
« տոսի, և է ազնիս Աստուծով գործող. ա-
« ղաչան տերաւոր առ ձեզ եղբայրք, գրեցեալ
« անուամբն յիշեալիք ի Տէր »:

*

Սոյն Յիշատակարանին համաձայն, այս
բժշկարանը գրուած է ուրեմն Հայոց ՌճՂՖ
և Քրիստոսի (1173 + 551 =) 1724
թուին. զորոն ալ եղած է՝ Քիրէմէթ,
(ճիշդը՝ Քէրէմէթ) գիւղի Քահանայն, որ
ինքն ալ բժշկութեամբ կը զբաղէր ան-
շուշտ, ինչպէս բոլոր գիւղի բահանաները:
Հոս հարկ կը համարիմ յիշել, թէ
Աննայ դայեակին և այդ Քահանային բուն
ձեռագիր բժշկարանը իմ սեպհականու-
թիւնս է. գնած եմ զայն Պոլիս 1912ին
Գոռանեան անուն անձէ մը:

Ս. Ղազարու ձեռագիրը անկասկած ընդ-
օրինակուած է քովն եղածին, բայց սխա-
լագրութեամբ:

Նախ՝ Թուականի սխալ. զի իմ օրի-

նակին մէջ գրուած է՝ « բազում խորաբօք
« որ ասեին զիսն յիյոնմի կինն ի բոսին,
« Հայոց ՌճՂՖ Դեկտեմբերի ԺԳ օրն կի-
« բակի »: Այսինքն 1171 + 551 =
1722ին, որով 5 տարի աւելի կը հիննայ
բժշկարանս:

Յետոյ՝ իմ քովի ձեռագրին մէջ Աննայ
դայեակին անունին քով գրուած է « կադ »
բառը, մինչ Ս. Ղազարի օրինակին մէջ
« կայ » գրուած է. իսկ կ'ըսէ « Քիրեմիտ
« գիւղն կադ Աննա դայեակն առեցեալ »,
ինչ որ իմաստը աւելի կը ճշդէ:

Բայց իմ ձեռագրին Յիշատակարանը
կը յայտնէ նաեւ գրիչ Քահանային անունը,
այսպէս. « Եւ ես գրեցի տնայրժան Քահանայ
« Յակոբ անուամբս » և այլն:

*

Ուստի այս մէկ քանի կարեւոր կէտերը
ճշդելէ յետոյ, կրնանք ըսել՝ թէ Թշկունի
կադ Աննա դայեակ Սիյոնմեանը գուցէ 1722ին
մեռած էր արդէն. բայց ամէն պարագայի,
նա այդ գիւղին և Թերեւս շրջականերուն
մէջ 17րդ դարու վերջերս և 18րդ սկիզբը
կարող բժշկիկ համբաւ ունեցած է, և ո՞վ
գիտէ ինչ հրաշագործութիւններ !!! Ըրած
էր, որ գիւղին Տէր Յակոբ Քահանայն՝
ինքն ալ բժշկութեամբ պարագադ, իւր
Բամպուտս անուն Երեգունիին աղաչանք-
ներովը կը յաջողի անկէ քաղել այս բոլոր
դեղերը և ամփոփել զանոնք այս ձեռա-
գրին մէջ:

Կ'արժէ ապա, որ Աննա դայեակի անունը
դասուի 17-18 դարու հայ բժշկիկներու
կարգը, զոր ընդհանրապէս կը բաղկա-
ցնենն այրեր, և Աննայ Սիյոնմեան միակը
կ'ըլլայ անոնց մէջ:

*

Ինչպէս կանխաւ յայտնեցի՝ այս ձեռա-
գիրը Քիրէմիտ գիւղի քահանային գրածն
ընդօրինակութիւն մ'է. որուն համար հա-
տորին վերջը կայ Յիշատակութիւն՝ այս-
պէս.

« Յամի Տեառն 1885 Օգոստոս 16: Ի
« Հայրապետութեան սրբոյ Արտոյն էլ:

« Միսեմի, Տ. Տ. Մակարայ Սրբազան կա-
 « րողիկոսի ամենայն Հայոց, և ի պա-
 « տրիարքոսեան Սրբոյն Երաստապետայ,
 « հանգուցեալ Տ. Երաստայ Արքեպիսկոպոսի,
 « և ի պատրիարքարան կ. Պոյոյ Տ. Յա-
 « րոսիւն Սրբազան Արքեպիսկոպոսի,
 « վերստին ընդօրինակեցաւ թշկարան կո-
 « չեցեալ մատենան ձեռնարկ Անտոնի որ և
 « որիկ Մարգար Գահանայի Բաղիշեցոյ.
 « ի կ. Պոյիս ընդ հովանեան Սուրբ Յա-
 « րոսեան Եկեղեցոյ Բերայի:

« Վասն որոյ աղաչեմ, որք հանդիպիր
 « այսմ մատենակի թէ՛ ընդերցմամբ, թէ՛
 « գործածութեամբ, և երբ վասն ընդօրինա-
 « կելոյ, ի խնկաւետ ազօրս ձեր յիշելոյ
 « զպիտակ Անտոնի, զգրող թշկարանիս և
 « զվերոյիշեալ Մարգար Գահանայն հայրն
 « իմ, (որ ի գրեցն իմում զսա՛ ինձ օժան-
 « դակեր), և զքարեպաշտ Տիրուհի Մայրն
 « իմ, զՄարիամ Տիկին, և զհարազատ եղ-
 « րայրս՝ զպարոն Նշան, և զպարոն Արսեն,
 « և զԳրորքս՝ զԱղասա, զԱնգիւն, և զԵրաստոզ,
 « և զհանգուցեալ հախնիսն մեր, զհասն իմ
 « Յարոսիսն, զՀայր Մարգար Գահանայի,
 « և զնորին Հայր Մուրատ, և զՀայր Մու-
 « րատին զՂուսրո, աշխնքն Ղուսրի, որոյ
 « անուամբ մակամուսնեալ մեր սերունդ կոչի
 « Ղմրեան:

« Աղաչեմ և զայս, զի երբ հարկ յիցի
 « ումեք ընդօրինակել զթշկարանս, օրինա-
 « կեացէ ընդ նմին և զայս յիշատակարանս
 « անուանց զեղծման, որպէս և մեք ընդօրին-
 « ակեցաք զյիշատակարանն իմացիր թըշ-
 « կարանի. Նանա վերոյցրեալ անուանք ի
 « խնկաւետ ազօրս ձեր յիշէք, որ և դուք
 « յիշողք յիշեալ յիշէք ի պարտքին կնեաց
 « Աստուծոյն Բարձրելոյ, որ և օրհնեալ ի
 « պարգեւս խոր, որոնք և վայել և փառք,
 « պատու, և երկրպագութիւն ամենասուրբ
 « Երրորդաբնան Հօր և որդոյն և հոգոյն
 « սրբոյ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւի-
 « տենից ամեն»:

*

Ղմրեան Անտոն չի յայտնեք թշկա-
 րանիս բնագիրը որո՛ւ է սեպհական և ո՛ւր

կը գտնուէր այն: Բայց յաւէտ երախտա-
 պարտ ենք իրեն, որ մոռացութենէ փրկած
 է թշկուհի Հայ կին մը, ԱՆՆԱՅ ԶԻՅԷ-
 ՄԵԱՆ, որ թշկարաններու շնորհիւ կրցած
 է բաւական ժամանակ թշկութեան ա-
 ռուեստն ի գործ դնել, և նաեւ իր զիտ-
 ցածներն ալ գրի առնել տալ:

Մխիթարեան Մխարանութիւնը այս
 թշկարանն գնած է 1 մայիս 1888ին:

ՏՕՏԵ. ՎԱՆԸՍ Թ. ԹՈՐՈՍՅԱՆ

Վենետիկ — Ս. Ղազար

1 փետրուար 1923

(Շարունակելի)

ԼԵԶՈՒԱԳԻՏԱՆԻԿ

ՀԱՅՅԵՐԷՆ ՆՈՐ ԲԱՌԵՐ

ԳՐԻԳՈՐ ՄԱԳԻՍՏՐՈՍԻ ԹՂԹԵՐՈՒՆ ՄԷԶ

(աղ. Անգլոսահապաւ 1910)

(Շար. տես Բազմ. 1924, էջ 40)

40. Խոսի. իմաստը անյայտ է. Շոնշան
 խելապատակին վերտառեալ՝ ղեղեւեցին
 այսր անդր ունեառութեամբ, զոգալով
 Թոպեալ իբրու ի Պիսիդոնի, որ այժմ
 ստորաբերեալ խափուցանէ, ի Աօնէ կար-
 կատեալ այժմահեծուին այն և երկնաշուն,
 որպէս յեղջերջ խող խրեցեալ խափուց-
 մամբ (էջ 203): — Ընդհանուր իմաստը
 հետեւեալն է. իրենց խելը պիտի դառնայ
 և ապին անդին պիտի իյնան ծովի վրայ
 տարուբերուածի պէս կամ ինչպէս եղջիւ-
 րով հարուած ստացած:

41. Մապատրակիլ « զարուբիլ, սար-
 սափիլ ». իբրու ի ծովի համատարածի
 ծփեալը, անդեկարար վարանեալը ի ծե-
 րունեաց ծառացելոց ալեանց ծփմանց,
 ի ծեղ պ անկեանցն ծպտեալը նաւացն,
 ծապատրակեալը ի հոսիցն բլրաձև կոհա-
 կացն, նաւապետին անկարկեն (էջ 203).
 — Կրնայ նաեւ նշանակել « Թրշուիլ,
 խիւում ըլլալ »: